

նաև օգնեցեն այլոց ծախից տպագրեցմանն, եթէ Գերյարգելութիւնդ յանձն առնուցու տպագրել: Եւ պատճառաւ սորա կարեմք նաև զայլս ազնիւ և սակաւագիւտ գրեանս գտանել և ստանալ, քանզի Վէր. Տէր Արմէնոն գնալոց է յայտմիկ ձմեռան ի Լէհաստան առ ի բերել զբաղկիրքն. և (որպէս ի միւս թղթին գրեալ եմ) եթէ կամք իցեն Գերյարգելութեանդ՝ գնացից և ես ընդ նմա անդ, զի որպէս յուսագրեն զիս՝ կարեմ զբազում ազնիւ գրեանս անդէն շահել: Ամենայն խնդրեմ, և նորա ի միասին խնդրեն, զի հաճիցի Գերյարգելութիւնդ շուտով յլել զպատասխան գրոյս, որպէս զի կարիցեն բարեպէս տրամագրել զայսմանէ իրէ: Բաւեցի այսքանս: Եւ այսու մնամ Գերյարգելութեանդ պատրաստական յամենայնի

Մամի Տեառն 1740
Գեկտեմբերի 4
ի Արմէնօպօլիս

Նուստագունեղ Նրոսայ
Հ. Թէոդորոս Յովաննիսեան
Կրօնաւոր ի կարգէ սրբոյն Անտօնի Աբբայի

ՃԲ.

Վախճանեալ Պատրիարզն է Բաղիշեցի Յովհաննէս Կոլոտ: Ասոր մահուան և ապա յաջորդին զահակալութեան մասին Չամչեան ևս ճիշդ նոյն կերպով այսպէս կ'արտայայտուի. « Ի յաջորդ ամի անդ (1741) եհաս վախճան կենաց յովհաննու « պատրիարգին յամենանն փետրվարի. և մեռա զգաստութեամբ և բարի մահուամբ. « և թաղեցաւ առ դրան եկեղեցւոյ լուսաւորչին. և ի նմին իսկ աւուր զգեցաւ յակոր « նալեան յարբունի դրան զգեստ Պատուոյ իշխանութեանն, և նստաւ հանդիսիւ « յաթոռ պատրիարգութեանն »¹:

Մեր վաւերագիրը կը յաւելու նաև իբր մանրամասնութիւն վերոյիշեալ դէպքին՝ հետաքրքրական կարգադրութիւն մը և անոր մէկ հետեւանքը:

Գերյարգեցիոյ տեսն տեսն Մխիթարայ Աբբայի Հօր մերոյ

. . . Պատրիարգ Կոստանդինիպօլսոյ յօհաննէս վարդապետն ի փետրվարի ամիսն անդրափոխեցաւ աստի կենաց ի ժամն լուսաւորչաց և անդ թաղեցաւ. և ի տեղի իւր եղ պատրիարգ նաւօղլու յակօբ վարդապետն: Արդ՝ յորում աւուր վախճանեցաւ պատրիարգն, ի նոյնում աւուր հազաւ զկապայ ի դրանէ. և յօրէ յայնմանէ հրամայեցաւ ամենից եկեղեցեաց մինչև ի քառասուն օր բաց պատարագ առնել վասն հոգւոյ պատրիարգին: Բայց ի սուլումանաստր պասմաճը օղլու կոչեցեալ դժոխբերանն՝ ասելով օրինազանցութիւն բաց պատարագ կատարելն ի քառասնորդական պահոց, զոց պատարագ արարեալ է. և ի միւսում աւուր կոչեցեալ ի նոր պատրիարգէն առնթերն, զբազում նախատինս ընկալեալ է ի նմանէ. նաև արգիլեալ գնա յախտեան յեկեղեցիին ոչ զճանուցումն առնել և ոչ զքարոզ տալ. և եղբօր նորա տէր մարտիրոսին շնորհեալ զմի փիլոն նախագահ արարեալ է գնա: Մարտի 9 փիղ անցուցին ի ուսկուտարու ի պէշիկտաշ, զորս բերեալ եղև դեսպանն կարմիր գլխոյն. և ինքն դեսպանն տակաւին է ուսկուտար. և մուշտակի դեսպանն ի մաքրեղն է . . .

Յամի տեառն 1741
և մարտի 10
[Կ. Պոլիս]

Գերափայլութեան ձերում
Նուստագունեղ ծառայ
Ս. տ. ս. Հայր Պօղոս Վարդապետ

1. Չամչեան, Պատմ. Հայոց, Հտ. Գ. էջ 824.